ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 73 - 74 (16162) ՇԱԲԱԹ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼԻՍ ՀԷԿ-ԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ

Սեպտեմբերի 16-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին եւ էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Կախա Կալաձեն մասնակցեցին Աջարիայում նոր հիդրոէլեկտրակայանի կառուցման հիմնարկեքի արարողությանը:

Իվանիշվիլին շնորհակալություն է հայտնել տեղաբնակներին, որ ՇուախեւՀԷԿ-ի կառուցումը մեկնարկել է հանգիստ իրավիճակում, առանց միջադեպերի. «Ինչպես հայտնի է, շատ քաղաքական գործիչներ շահարկում են ՀԷԿ-երի կառուցման թեման: Շատ հաճախ նրանց հաջողվել է բնակչությանը համոզել այդ նախագծերի ոչ շահավետ լինելու մեջ: Սակայն, Վրաստանի համար կենսական կարեւորություն ունի էներգետիկ անկախությունը, եւ մենք պետք է լավ սերտենք այն: Մենք չունենք արտահանման այնպիսի հնարավորություններ, որոնք հնարավորություն կտային գնել էլեկտրաէներգիա: Մենք պետք է կառուցենք բազում նոր ՀԷԿ-եր, իսկ դա իր հերթին նպաստելու է նոր ձեռնարկությունների ու հավելյալ աշխատատեղերի ստեղծմանը»: Նոր ՀԷԿ-ի՝ ՇուախեւՀԷԿ-ի սահմանային հզորությունը կազմում է 178 մեգավատտ, իսկ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը՝ 445,1 միլիոն կիլովատտ ժամ: ՀԷԿ-ի շինարարության նախագիծը նախատեսում է երկու ամբարտակի եւ ջրամբարի շինարարություն:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Սեպտեմբերի 16-ին, Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին այցելել է Սամցխե-Ջավախեթի:

Նա սկզբում այցելել է կրթական հաստատություններ՝ կապված Վրաստանում նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ, այնուհետ Ախալցիխե է մեկնել՝ տեսակցելու նախին վարչապետ Վանո Մերաբիշվիլու ընտանքի անդամներին: «Մերաբիշվիլու ծնողների հետ մենք հին բարեկամներ ենք՝ շուրջ 20 տարվա: Ամեն անգամ այցելում եմ նրանց»,- ասել է նախագահը: Մերաբիշվիլին ձերբակալվել է 2013թ. մայիսի 21-ին եւ մեղադրվում է կոռուպցիոն գործունեության, ծառայողական լիազորությունների չարաշահման եւ պետական միջոցների մխսման մեջ: Ախալցիխեում փոքր միջադեպ է տեղի ունեցել: Երբ Սաակաշվիլին դուրս է եկել «Լոմսիա» հյուրանոցից, բնակիչներից մեկը նրա ուշադրությունը հրավիրել է այն փաստին, որ հյուրանոցի վրա միայն անգլերեն ցուցատախտակ կա: Ի պատասխան, Սաակաշվիլին նշել է, որ Ախալցիխեում Վրաստանի հնգախաչ դրոշի դեմ պայքարող ուժեր կան: «Դուք նշում եք մինարեթի մասին: Պատահաբար չգիտե՞ք՝ ով է կառուցել: Վրաստանի կառավարությունը: Այնպես որ, հաջորդ անգամ նախքան ստերին հավատալը լավ ծանոթացեք ծրագրերին»,- ասել է Սաակաշվիլին:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Սեպտեմբերի 19-ին, Թբիլիսիի Մարզապալատում, անցկացվեց «Վրացական երազանք» կոալիցիայի նախագահության թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլու նախագահական ծրագրի շնորհանդեսը:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները, նախարարների կաբինետի անդամները, կոալիցիայի լիդերները, հասարակության ներկայացուցիչները եւ «Վրացական երազանքի» ակտիվիստները:

Թեկնածուի ծրագրի շնորհանդեսը վարում էր Նինելի Չանկվետաձեն: Միջոցառմանը առաջինը ելույթ ունեցավ կոալիցիայի երիտասարդական շարժման նախագահ Օթար Աբեսաձեն, ապա ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին եւ նախագահության թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին: Իր ելույթում վարչապետը Գիորգի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԸՀ-Ն 54 ԹԵԿՆԱԾՈՒԻՑ 29-ԻՆ ԱՐԴԵՆ ՄԵՐԺԵԼ Է

Սեպտեմբերի 17-ին սպառվեց նախագահության թեկնածուների կողմից իրենց կողմնակիցների ստորագրությունները Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հանձնելու ժամկետը:

Նշենք, որ, ընդհանուր առմամբ, Վրաստանում հոկտեմբերի 27-ին անցկացվելիք նախագահական ընտրություններին մասնակցելու ցանկություն էին հայտնել 54 թեկնածուներ: Իրենց կողմնակիցների ստորագրություններով ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հանձնել էին 26 թեկնածու, որոնցից 11-ը ներկայացնում էին քաղաքական կուսակցությունները եւ 15-ը՝ նախաձեռնողական խմբերը: Վերոնշյալ 54 թեկնածուներից 29-ին ԿԸՀ-ն հրաժարվեց գրանցելուց, մնացած 26 թեկնածուների գրանցումը ենթադրաբար կանցկացվի սեպտեմբերի 27-ին:

Այսօրվա դրությամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից արդեն գրանցվել են 12 թեկնածուներ: Դրանք են՝ «Վրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՕՐՆ Է

Այսօր լրացավ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձը:

Սեպտեմբերի 21-ին Հայաստանը եւ հայկական սփյուռքը տոնում են մեր օրերի ամենանշանավոր իրադարձությունը՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: Հայաստանը, 1918 թվականի իր հերոսական հռչակումից 73 տարի անց, վերականգնեց իր անկախությունը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին կայացավ համազգային հանրաքվե, որի արդյունքում Հայաստանը որդեգրեց անկախության ուղին:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի առթիվ, սեպտեմբերի 20-ին Վրաստանում Հայաստանի դեսպանությունը անցկացրեց ընդունելություն, որին ներկա էին Վրաստանի կառավարության անդամներ, երկրում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ վիրահայ համայնքի ներկայացուցիչներ:

Ընդունելությանը խոսքով ելույթ ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը: Պատասխան խոսքով հանդես եկավ Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՕԾՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Սեպտեմբերի 17-ին Ռուսաստանի մայրաքաղաքում օծվեց Հայաստանից դուրս գտնվող ամենամեծ Մոսկվայի Հայոց առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպության եկեղեցին եւ բացվեց եկեղեցական համալիրը:

Մայր Տաճարի օծման հանդիսավոր ծիսակատարությունը կատարել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Արարողությանը ներկա է եղել եւ իր օրհնությունն է բերել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլը:

Արարողությանը ներկա են գտնվել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ տիկին Ռիտա Սարգսյանը, Ռուսաստանի պետական եւ հասարակական գործիչներ, Հայ Առաքելական եկեղեցու Հայաստանի եւ արտերկրի խոշորագույն թեմերի առաջնորդներ, Ռուսաստանի կրոնական հարանվանությունների առաջնորդներ, ներկայացուցիչներ ու բարերարներ: Մասնակիցների թվում էր նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հայաստանի բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը սեպտեմբերի 18-ին Թբիլիսիում մասնակցեց Բնապահպանական գործողությունների ծրագրերի նպատակային խմբի /EAT Task Force/ ամենամյա հանդիպմանը:

Հանդիպմանը մասնակցեցին Արեւելյան Եվրոպայի, Կովկասի ու Կենտրոնական Ասիայի (EECCA) եւ Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (OECD) անդամ երկրների պետական պաշտոնյաներ եւ գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Այցի շրջանակներում, Վրաստանի բնապահպանության ու բնական պաշարների նախարար Խաթունա Գոգալաձեի եւ Հայաստանի բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի հանդիպմանը պայմանավորվել են նախապատրաստել ու ստորագրման ներկայացնել երկու երկրների գերատեսչությունների միջեւ կնքվելիք՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող, հարցերի վերաբերյալ փաստաթուղթ, որը հետագա փոխգործակցության համար է՝ ավելի արդյունավետ ընթացք կապահովի: Արամ Հարությունյանն իր վրացի գործընկերոջը հրավիրել է աշխատանքային այցով ժամանել Հայաստան:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ-Ն 54 ԹԵԿՆԱԾՈՒԻՑ 29-ԻՆ ԱՐԴԵՆ ՄԵՐԺԵԼ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցական երազանք» կոալիցիան ներկայացնող Գիորգի Մարգվելաշվիլին, «Միասնական ազգային շարժման» թեկնածու Դավիթ Բաքրաձեն, «Ժողովրդավարական շարժում-Միասնական Վրաստանի» ներկայացուցիչ Նինո Բուրջանաձեն, Լեյբորիստական կուսակցության թեկնածու Շալվա Նաթելաշվիլին, Քրիստոնեա-ժողովրդավարական շարժման նախագահ Գիորգի Թարգամաձեն, ժողովրդի կուսակցության թեկնածու Կոբա Դավիթաշվիլին, «Հանուն արդարացի Վրաստանի» ներկայացուցիչ Սերգո Ձավախիձեն, նախաձեռնողական խմբերի թեկնածուներ Միխեիլ Սալուաշվիլին, Նեստան Կիրթաձեն, Գիորգի Լիլուաշվիլին, Լեւան Չաչուան, Ավթանդիլ Մարգիանին:

ԱՆՅԿԱՅՎԵՅ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մարգվելաշվիլուն անվանեց թիվ առաջին նախագահության հավակնորդ: «Գիորգին հանդիսանում է արժանի անձնավորություն՝ ժամանակակից, զարգացած, հավասարակշռված եւ ազնիվ անցյալով: Գիորգի Մարգելաշվիլուն վստահության ցուցաբերումը վստահության ցուցաբերում է իմ նկատմամբ: Անցյալ տարի հոկտեմբերին ողջ երկիրը ոտքի կանգնեց եւ քվեարկեց ազատության օգտին: Համոզված եմ, որ այս հոկտեմբերին էլ մենք կրկին կմիավորվենք եւ կընտրենք Գիորգի Մարգվելաշվիլուն, կքվեարկենք Վրաստանի հաջողության եւ կայունության օգտին: Խորապես հավատում եմ, որ Գիորգի Մարգվելաշվիլու հաղթանակը կլինի ընդհանուր ողջ երկրի համար: Գիորգի Մարգվելաշվիլին կդառնա Վրաստանի նախագահ, եւ նա կլինի բոլորի նախագահը»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԼԻՆԻ ԱՆՎՃԱՐ

Վրաստանում մասնագիտական կրթությունը հետայսու կլինի անվճար: Սեպտեմբերի 19-ին Վրաստանի կառավարությունը հաստատեց երկրի կրթության նախարարության կողմից ներկայացված համապատասխան որոշումը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության նախարար Թամար Սանիկիձեն, վաուչերների համակարգի վրա հիմնված ֆինանսավորման նախկին մոդելը չի կարողանում մարել ուսուցման վրա ծախսվող գումարները:

«Նախկինում մասնագիտական ուսուցման ֆինանսավորման համար, օգտագործվում էր վաուչերային համակարգը, ըստ որի, մի ուսանողի հաշվով հատկացվում էր մոտ հազար լարի: Սակայն, այդ գումարով հնարավոր է մարել միայն ուսուցման առաջին փուլի ծախսերը: Կրթության նախարարության նախաձեռնության համաձայն, հետայսու մասնագիտական ուսումնարաններում ֆինանսավորումը կլինի լիարժեք եւ, եթե ուսանողը թեստավորման արդյունքում հաղթահարի իմացության նվազագույն մակարդակը, ապա նրա ուսուցումը լրիվությամբ կֆինանսավորվի պետության կողմից»,- հայտարարեց կրթության նախարար Թամար Սանիկիձեն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՇՈՒՐՋ 700 ՀԱԶԱՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒ ՍՏԱՑԱՎ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Սեպտեմբերի 1-ից Վրաստանում տարեց մարդիկ ստացան ավելացված կենսաթոշակ: Այն ավելացվել է 30 տոկոսով, եւ հասցվել կենսական նվազագույնին:

Դա Վրաստանի կառավարության ղեկավար Բիձինա Իվանիշվիլու նախընտրական խոստումներից մեկն էր. 90 դոլար՝ 75-ի փոխարեն: Ավելացված կենսաթոշակ է ստացել շուրջ 700 հազար Վրաստանի քաղաքացի:

«Նոր կառավարությունը հնարավոր ամեն ինչ արեց, որպեսզի 2013 թվականի բյուջեն լինի սոցիալական կողմնորոշմամբ: Պետությունը հաշվի առավ կենսաթոշակի եւ սոցիալական օգնության ավելացումն ու այդ նպատակով առանձնացրեց անհրաժեշտ գումարը: Եթե նախկին կառավարության օրոք կենսաթոշակի եւ սոցիալական օգնության համար տարեկան հատկացվում էր մոտ 70 միլիոն դոլար, ապա ներկայումս ամսական հատկացվում է ավելի քան 80 միլիոն դոլար»,- հայտարարեց Վրաստանի սոցիալական սպասարկման գործակալության տնօրեն Նոյ Քինքլաձեն:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎՈՒՄ ԵՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի ֆինանսների նախարարությունում աշխատանքներ են տարվում հարկային եւ մաքսային օրենսդրության տարանջատման ուղղությամբ:

Ֆինանսների նախարար Նոդար Խադուրու գլխավորությամբ հիմնվել է հատուկ խումբ, որը իրականացնում է վերոնշյալ գործընթացի համակարգումը:

Հարկային օրենսգիրքը, որտեղ միավորված են հարկային եւ մաքսային օրենսդրությունները, ընդունվել էր 2011 թվականին: Ֆինանսների նախարարությունը ցանկանում է, որպեսզի ապագա մաքսային օրենսգրքի ձեւավորման գործին ակտիվ մասնակցություն ցուցաբերեն փորձագետները եւ բիզնես-հատվածի ներկայացուցիչները, ընդսմին՝ բանավեճերը կլինեն հրապարակային, եւ շահագրգռված բոլոր կողմերը կարող են ներկայացնել իրենց առաջարկությունները:

«Վրաստանը ստանձնել է միջազգային պարտավորություն, որի շրջանակներում, իրականացվում է Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի մշակումը, որը եւ նախատեսում է մեր օրենսդրության, այդ թվում՝ նաեւ մաքսային ոլորտում օրենսդրության համապատասխանեցումը եվրոպական օրենսդրությանը: Ուստի, որոշում ընդունեցինք, եւ ֆինանսների նախարարությունը սկսել է աշխատանքը հարկային եւ մաքսային օրենսդրությունների տարանջատման ուղղությամբ: Դիմում եմ ներդրողներին ու փորձագետներին, մարդկանց, ովքեր առնչվում են մաքսային ոլորտին, ակտիվ մասնակցություն ցուցաբերել փաստաթղթի մշակման գործընթացին, որպեսզի ստանանք փաստաթուղթ, որը իրականում կգործի եւ կկարգավորի այդ հիմնախնդիրները, որոնք այսօր առկա են»,- հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին:

Նոր օրենսդրությունում մանրամասը կներկայացվեն մաքսային վարչարարության մեխանիզմներն ու ընթացակարգերը: Կսահմանափակվի ֆինանսների նախարարի իրավասությունը, եւ մաքսային ոլորտում կարգավորման մեծ մասը կրկին կորոշի խորհրդարանը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԸ ԳՈՀ Է ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԹԱՑՔՈՎ

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոն գոհ է համընդհանուր ապահովագրության նախագծի ընթացքով:

Նրա հայտարարությամբ, նախագծի իրականացման ընթացքում ծագեցին տեխնիկական հիմնախնդիրներ, որոնք գրեթե լրիվությամբ կարգավորվել են: «Ինչ վերաբերում է հիվանդանոցների սպասարկմանը, ապա նախագիծը, թեպետ առնչվել է բնակչության 100 տոկոսին, մեզ հնարավորություն տվեց վերահսկողություն սահմանել մատուցված սպասարկումների նկատմամբ եւ ներդնել բժշկական սպասարկման որակական նոր համակարգ: Այդ ուղղությամբ ներկայումս էլ քայլեր են իրականացվում»,- նշեց Դավիթ Սերգեյենկոն:

Նրա խոսքերով, նախագծի առաջին եւ երկրորդ փուլերը կատարվել են բարձր մակարդակով: Ինչ վերաբերում է երրորդ փուլին, ապա այդ արդյունքները հայտնի կդառնան նախագծի վերագնահատումից հետո:

«Ինչ վերաբերում է երրորդ փուլին, ապա մինչեւ դրա իրականացումը մենք ֆինանսապես կգնահատենք, թե որքանով է արդյունավետ սույն նախագիծը: Խոսքը վերաբերում է վարչարարությանն ու որակին, եւ այդ ամենը կիրականացվի սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի առաջին կեսին: Դրանից հետո, մենք կընդունենք որոշում. շարունակե՞լ արդյոք երրորդ փուլը տվյալ ծավալով, թե՞ հարկ է այն ընդլայնել»,- հայտարարեց նախարարը:



ՄԱԿ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 68-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Նյու Յորքում սեպտեմբերի 17-ին աշխատանքն սկսեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 68-րդ նստաշրջանը:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված է 170 թեմա:

Ավանդաբար, Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի շրջանակներում, կկայանա ընդհանուր քաղաքական բանավեճ, որը սեպտեմբերի 24-ից մինչեւ հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կընթանա պետությունների ու կառավարությունների ղեկավարների, ինչպես նաեւ արտաքին գործերի նախարարների մասնակցությամբ:

Սպասվում է նաեւ Սիրիայի հակամարտության քննարկումը, որը, ինչպես հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, այսօրվա դրությամբ խաղաղության եւ անվտանգության ամենալուրջ մարտահրավերն է: Նրա խոսքով, նստաշրջանի օրակարգի գլխավոր հարցերի թվում կլինեն նաեւ Աֆղանստանի, Եգիպտոսի, Մալիի եւ Կենտրոնաֆրիկյան Հանրապետության իրադրությունը:

Գլխավոր ասամբլեան ՄԱԿ-ի գլխավոր խորհրդակցական մարմինն է: Այն միավորում է 193 երկիր:

ԱՄՆ

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

13 մարդ Վաշինգտոնում ԱՄՆ ՌՕՈՒ ռազմակայանում բացված կրակի զոհ է դարձել, եւս 14-ը վիրավորվել են: Հարձակման երեք կասկածյալներից մեկը սպանվել է, երկրորդը՝ «չեզոքացվել»:

Հրաձգային զենքից կրակ է բացվել երկուշաբթի առավոտյան Navy Yard ռազմակայանում, որը գտնվում է Անաքոսթիա գետի ակունքներում: Կրակը բացվել է մշտական հսկողության տակ գտնվող շենքում: Այնտեղ է գտնվում նաեւ ԱՄՆ ՌՕՈՒ շտաբի պետի կենտրոնակայանն ու թանգարանը:

Սպանդի մեղավորը 34-ամյա Աիարոն Ալեքսիսն է, նախկինում նա ծառայել է ԱՄՆ ՌՕՈՒ շարքերում եւ անցաթուղթ ուներ, ուստի, կարող էր մուտք գործել այդ եւ մյուս ռազմական օբյեկտներ: Նա աշխատում էր ՏՏ ոլորտի ընկերությունում: ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման սուգ է հայտարարել:

ՍԻՐԻԱ

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔԸ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը հայտարարել է, որ երկրի կառավարությունը պատրաստ է իրականացնել Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի հետ քիմիական զենքի հարցով ձեռք բերված համաձայնությունը: Նա ասել է, որ քիմիական զենքը ոչնչացնելու համար մեկ տարի ու մեկ միլիարդ դոլար գումար է անհրաժեշտ:

Fox News-ի հետ զրույցում Ասադը հերքական անգամ հավաստիացրել է, որ օգոստոսի 21-ին ապաստամբներն են քիմիական զենք կիրառել:

ԹՈՒՐՔԻԱ

ՈՉՆՉԱՑՎԵԼ Է ՍԻՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱԹԻՌ

Թուրքական ավիացիան սիրիական ուղղաթիռ է խփել Հաթայ հարավային գավառի օդային տարածքում՝ զգուշացնելով Մի-17-ի անձնակազմին սահմանը խախտելու մասին:

Միջադեպը տեղի է ունեցել սիրիական ընդդիմության վերահսկողության տակ գտնվող տարածքում: Երկու օդաչուները հասցրել են փրկվել կատապուլտայի միջոցով եւ բարեհաջող կերպով վայրէջք են կատարել, սակայն սպանվել են ընդդիմադիր գրոհայինների կողմից:

Նշենք, որ Թուրքիան հանդես է գալիս Սիրիային հրթիռային եւ ավիացիոն հարված հասցնելու ու Բաշար Ասադին տապալելու օգտին: Նախագահ Աբդուլլահ Գյուլը հայտարարել է, որ ՄԱԿ-ը պետք է ականջալուր լինի Սիրիայի հարցում Թուրքիայի կարծիքին:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՌԱԶՄԱԿԱՆ

2015 ԹՎԱԿԱՆԻՑ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԴԱՌՆԱ ՆԱՏՕ-Ի ԱՐԱԳ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՈՒԺԵՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԸ

Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան հայտարարել է, որ Վրաստանի զինվորական կոնտինգենտը 2015 թվականից հանդիսանալու է ՆԱՏՕ-ի Արագ արձագանքման ուժերի մասնիկը. «2015 թվականից Վրաստանը դառնալու է ՆԱՏՕ-ի Արագ արձագանքման ուժերի անդամ:

Այդպիսի որոշում ՆԱՏՕ-ն ընդունել է երեք շաբաթ առաջ: Դա հանդիսանում է վրացական զինված ուժերի մեծ ճանաչում»:

«Դաշինքի այդ որոշումը նշանակում է, որ Վրաստանի բանակն արդեն գործնականում ՆԱՏՕ-ում է»,- նշել է նախարարը: «Այժմ մենք՝ քաղաքական գործիչներս, պետք է ձգտենք հասնել բանակին եւ բարձրանալ մինչեւ դաշինքի ստանդարտներ»,- հավելել է նա:

Նշվում է, որ Վրաստանը ՆԱՏՕ-ի Արագ արձագանքման ուժերի մեջ մտնելու մասին առաջարկով դաշինքին դիմել է հուլիսի կեսին: 2008 թվականի ապրիլին, Բուխարեստում անցկացված ՆԱՏՕ-ի անդամ երկրների գագաթաժողովում, որոշվել է, որ Վրաստանը կարող է դառնալ ՆԱՏՕ-ի անդամ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՆԱԽԱԳԻԾ

Բնակչության ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով կառավարությունը սկսել է աննախադեպ նախագիծ:

Վրաստանի կառավարությունն այդ նպատակով պայմանագիր է ձեւակերպել Եվրոպայի ներդրումային բանկի հետ 40 միլիոն լարիի հատկացման հարցով: Այդ գումարը նախատեսված է 25 մունիցիպալիտետում եւ երեք ավանում ջրամատակարարման համակարգի վերանորոգման համար:

Ինչպես հայտարարեց Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան, կառավարությունն արդեն հաստատել է ֆինանսների նախարարությանն ուղղված համապատասխան կարգադրությունը:

«Ջուգահեռաբար, մեր նախարարությունում ընթանում էր նախագծման փաստաթղթերի մշակումը: Քննարկումների գործընթացն իրականում ավարտվել է: Այսպիսով, արդեն ընթացիկ աշնանը մենք 25 մունիցիպալիտետի եւ երեք ավանի համար կունենանք նախագծային փաստաթղթերը»,- հայտարարեց Նարմանիան:

Նախարարը նաեւ նշեց, որ կառավարությունը հաստատել է յոթ տարածաշրջանների զարգացման ծրագիրը:

«Երկու տարածաշրջանների զարգացման ծրագիրը հաստատվել էր ավելի վաղ: Այսպիսով, այսօրվա դրությամբ, մեր տնօրինության տակ կա ինը տարածաշրջանների զարգացման ծրագիրը, որի իրականացմանը ձեռնամուխ կլինեն հունվարի 1-ից»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան սեպտեմբերի 17-ին հանդիպում ունեցավ զարգացման ասիական բանկի գործադիր տնօրեն էնտոնի Բեյքերի եւ Վրաստանում բանկի մշտական ներկայացուցիչ Քեյտ Ջուլիանի հետ:

Ինչպես տեղեկացրին նախարարությունից, ասիական բանկի գործադիր տնօրենը Վրաստան է ժամանել ընթացիկ ենթակառույցների նախագծերին ծանոթանալու նպատակով եւ հնգօրյա այցի ընթացքում հանդիպումներ է անցկացնելու տնտեսական ուղղության գերատեսչությունների առաջին դեմքերի հետ:

«Մեզ համար նշանակալից է տեսնել այն աշխատանքները, որոնք իրականացրել են մեր բանկի աջակցությամբ: Այդ կարգավիճակով սա իմ առաջին այցն է Վրաստան եւ հուսով եմ, որ համագործակցությունն առավել արգասաբեր կդառնա»,- հայտարարեց էնտոնի Բեյքերը:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՄ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ՏԱՅՎՈ ԿԼԱԱՐԸ

Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը նոր ղեկավար ունի: Ինչպես տեղեկացնում է Վրաստանում Եվրամիության դիտորդական ներկայացուցչությունը, Վրաստանում ԵՄ-ի Դիտորդական առաքելության (EUMM) նոր ղեկավար է նշանակվել էստոնացի Տոյվո Կլաարը, ով փոխարինել է հունիսի վերջին Վրաստանը լքած լեհ գեներալ Անջեյ Տիշկեւիչին, որը առաքելությունը գլխավորում էր 2011 թվականից: Իսկ մինչ այդ էլ, ԵՄ-ի որոշմամբ, EUMM-ի մանդատը երկարաձգվել էր մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 14-ը:

Վրաստանը ողջունել է ԵՄ-ի Դիտորդական առաքելության մանդատը մեկ տարով՝ մինչեւ 2014 թվականը, երկարաձգելու մասին որոշումը, ինչպես նաեւ առաքելության նոր ղեկավարի նշանակումը: Այս մասին հայտարարեց Վրաստանի փոխարտգործնախարար Դավիթ Ջալաղանիան: Ջալաղանիան ընդգծել է, որ Վրաստանի ԱԳՆ-ն հուսով է սերտորեն համագործակցել առաքելության նոր ղեկավարի հետ՝ հավելելով, որ EUMM-ը զգալի դերակատարություն ունի Վրաստանում կայունության ամրապնդման գործընթացում: EUMM-ը ԵՄ-ի կողմից հիմնվել է 2008 թվականի սեպտեմբերի 15-ին, օգոստոսյան պատերազմից հետո: EUMM-ը պաշտոնապես իր գործունեությանը ձեռնամուխ է եղել 2008 թվականի հոկտեմբերի 1-ին: Առաքելության կազմում ընդգրկված է մոտ 260 դիտորդ, որոնք ներկայացնում են ԵՄ-ի անդամ 25 երկիր, որ վերահսկում են Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի վարչական սահմանագիծը:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԶՈՒՐԱԲ ԱԲԱՇԻՁԵ. «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԴԵՌԵՎՍ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է»

Վրաստանի համար այս պահի դրությամբ սկզբունքորեն անընդունելի է Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը:

Այդ մասին հայտարարել է Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն ՌԴ ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի հետ սեպտեմբերի 19-ին Պրահայում կայացած հանդիպման ավարտին:

«Այժմ դա անընդունելի է, մեզ համար դա կնշանակեր այսպես կոչված նոր իրողությունները ճանաչել, դրան Վրաստանը չի գնա: Մեր երկիրը բազմիցս է փլուզվել, բայց հասել ենք այս օրվան: Կարծում եմ, մենք դեռ շատ բան կտեսնենք»,- ասաց Աբաշիձեն: Նա նշել է նաեւ, որ Թբիլիսիի համար «դյուրին որոշում» չէր 2014 թվականին Սոչիի Օլիմպիադային մասնակցելու որոշումը: «Մենք ունենք նաեւ քաղաքական գործիչներ, որոնք քննադատում են այդ քայլը, բայց մենք չենք ցանկանում քաղաքականությունը նույնացնել սպորտի հետ: Մենք շահագրգռված ենք, որ Օլիմպիական խաղերն անցնեն խաղաղ ու հանգիստ, առանց միջադեպերի»,- ասաց Աբաշիձեն:

Իր հերթին, Գրիգորի Կարասինը նշեց, որ Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու համար, Վրաստանում պետք է հաղթանակի քաղաքական արիությունը:

«Վրաստանի քաղաքական գործիչների համար դա շատ ցավոտ թեմա է, հատկապես նախընտրական շրջանում,- ասաց Կարասինը:- Այդ թեման ակտիվորեն է արծարծվում քաղաքական բանավեճում, ուստի, տարբեր ուղղվածության քաղաքական գործիչները որոշակի զգուշավորություն են պահպանում»:

Կարասինը հայտնել է, որ կանոնավոր ավիահաղորդակցությունը Ռուսաստանի ու Վրաստանի միջեւ կարող է վերականգնվել արդեն մոտ ապագայում:

Ներկա դրությամբ, Airzena ավիաընկերությունը Մոսկվա-Թբիլիսի չարտերային չվերթեր է կատարում շաբաթական 2 անգամ:

Առաջին անգամ ՌԴ ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի հետ Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն հանդիպել է 2012 թվականի դեկտեմբերին: Այդ օրվանից ի վեր 4 հանդիպում է տեղի ունեցել: Առաջին հանդիպումից հետո, վերսկսվեց վրացական գինու ու «Բորժոմի» հանքային ջրի արտահանումը ՌԴ:

Դիվանագիտական հարաբերությունները Վրաստանի ու Ռուսաստանի միջեւ խզվեցին 2008 թվականի օգոստոսյան պատերազմից եւ ՌԴ կողմից Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի անկախությունը ճանաչելուց հետո:



ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Սեպտեմբերի 14-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին իր նստավայրում ընդունեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին: Կառավարության ղեկավարը երկրի հոգեւոր առաջնորդին ներկայացրեց իր բիզնես-կենտրոնը: Պատրիարքը վարչապետին եւ նրա ընտանիքի անդամներին հանձնեց հուշանվերներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՐԱՑԻՆԵՐԻՆ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին Վրաստանի քաղաքացիություն է շնորհել Թուրքիայում ապրող ազգությամբ վրացի 936 մարդու: Նշենք, որ Վրաստանի նախագահը քաղաքացիության շնորհման հրամանագիրը ստորագրել է վերջերս, իսկ հիմա նա, Թուրքիա կատարած այցի շրջանակներում, իր հետ տարավ քաղաքացիությունը վավերացնող անձնագրերը եւ հանձնեց այդ մարդկանց:

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԱՅՑԵԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հետայսու Վրաստանի եւ Շվեյցարիայի միջեւ այցեգրերի հանձնումը կդյուրացվի: Այցեգային պայմանակարգի դյուրացման մասին փաստաթուղթը ստորագրեցին Վրաստանի եւ Շվեյցարիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարներ Մայա Փանջիկիձեն եւ Դիդյե Բուքիալտերտը: Ինչպես նշեց Փանջիկիձեն, վրացական կողմը ներկայումս աշխատում է նման եւս մի քանի պայմանավորվածությունների մշակման ուղղությամբ:

ՆՈՐԱՑՎԵՑ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՊԱՐԿԸ

Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային ոստիկանության ավտոպարկը նորացվեց: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, սեպտեմբերի 18-ին պարեկային նոր ավտոմեքենաներ պաշտոնապես փոխանցվեցին տարածաշրջանային ոստիկանությանը: Արարողությանը ներկա էին պարեկային ոստիկանության դեպարտամենտի ներկայացուցիչները:

Տարածաշրջանային ոստիկանության ավտոպարկը լրիվությամբ նորացվեց: Բացի այդ, տարածաշրջանային ոստիկանությանը փոխանցվել է «Շկոդա» մակնիշի վեց եւ «Տոյոտա» մակնիշի երկու պիկապ ավտոմեքենաներ: ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, պարեկային տեսուչներին հանձնվեց նոր համազգեստ, որը հանդերձված է տեսախցիկով, ձայնագրային սարքերով:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ԵՎ ՆԱԽԿԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ

Վրաստանում ձերբակալվել են Մցխեթա-Մթիանեթի նահանգապետ Ցեզար Չոչելին եւ էկոնոմիկայի նախկին փոխնախարար Դավիթ Գիորգաձեն:

Նրանք մեղադրվում են մեքենայություններով առանձնապես խոշոր չափերի պետական ունեցվածք յուրացնելու եւ ապօրինի եկամուտներ օրինականացնելու մեջ:

«Ցեզար Չոչելին այդ նպատակով հանցավոր կերպով կապի մեջ է մտել Դավիթ Գիորգաձեի հետ, որի հետ պայմանավորվել է խիստ ցածր գներով գործարան գնելու մասին: Արդյունքում՝ Չոչելին խարդախությամբ տիրացել է 19 մլն 696 հազար 764 լարի արժողությամբ պետական ունեցվածքին, որը մինչ այսօր նրա սեփականությունն է»,- հայտարարել է հետաքննչական ծառայությունը:

Վրաստանի բարձրաստիճան խարդախ պաշտոնյաներին մինչեւ 12 տարի ազատազրկում է սպասվում:

ԿՐԹԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԻՐ ԵՐԹԸ ՍԿՍԵՑ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՌԵՍՈՒՐՍ-ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Դիանա Ինասարիձե *(Ախալցիխեի շրջանի ռեսուրս-կենտրոնի ղեկավար)*

- Ախալցիխեի շրջանում այսօր գործում է 13 հայկական դպրոց, որից 2-ը հայ-վրացական են: Հայկական դպրոցների աշակերտության ընդհանուր թիվը շրջանում կազմում է 1431: Ինչ վերաբերում է վերանորոգման աշխատանքներին, ապա կրթօջախներից մի քանիսում շինարարական աշխատանքներ իրականացվել են դպրոցական բյուջեի հաշվին: Շրջանի առաջին դասարաններից յուրաքանչյուրը ստացել է անհատական նոութբուք:

Քյամանդար Իսմայիլով *(Մառնեուլիի շրջանի ռեսուրս-կենտրոնի ղեկավար)*

- Շնորհակալություն «Վրաստան» թերթին, որ տալիս է հնարավորություն նոր ուսման տարվա առթիվ շնորհավորել մեր շրջանի թվով 11 հայկական դպրոցների տնօրինությանը, մանկավարժներին ու հազարի հասնող հայ աշակերտությանը: Ուրախ եմ, որ դպրոցներն ունեն իրենց գործին սրտատրոփ մոտեցող անձնակազմ, ովքեր մեծ ակտիվություն են ցուցաբերում խնդիրների լուծման հարցում՝ հաճախ սեփական ռեսուրսներն օգտագործելով: Ուստի, շնորհավորում եմ նրանց եւ մաղթում ուսման հարուստ ու բովանդակալից ընթացք: Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանում գործում է այսօր 3 հայկական դպրոց: Մյուս 8-ը տեղաբաշխված են հայահոծ գյուղերում, ունենք նաեւ հայ-ադրբեջանական բաժինների 2 դպրոց, ուր մի շենքի տակ համերաշխորեն սովորում են հայ ու ադրբեջանցի երեխաներ: Լուրջ հիմնախնդիրներ հայկական դպրոցները չունեն, եւ գոյություն ունեցող որոշ խնդիրներ առնչվում են վերանորոգման աշխատանքներին եւ կամ դասագրքերի պակասին, մի բան, որի կարիքն ունեն, կարծում եմ, ոչ միայն հանրապետության հայկական դպրոցները: Ռեսուրս-կենտրոնը միշտ պատրաստ է լսել ու աջակցել բոլոր դպրոցներին անխտիր: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորին եւ հատկապես առաջին դասարանցիներին ու նրանց ծնողներին:

Արսեն Չմուխաձե. *(Ծալկայի շրջանի ռեսուրս-կենտրոնի ղեկավար)*

- «Վրաստան» թերթի միջոցով սիրով ողջունում եմ կրթության ոլորտի նվիրյալներին, դպրոցականներին, ուսանողությանը, բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն ունեն Վրաստանի ուսումնական հաստատությունների ներկան ու ապագան ապահովելու գործում եւ հատկապես դպրոցների սաներին, մանկավարժներին ու ծնողներին: Շնորհավորում եմ եւ մաղթում ուժ, կորով ու եռանդ: Սեպտեմբերի 16-ին նոր ուսումնական տարին շրջանի դպրոցներից յուրաքանչյուրում ուղեկցվեց տոնական հանդիսավոր միջոցառումներով: Շրջանում հաշվառվում է այսօր տասը հայկական հանրային կրթօջախ եւ ընդհանուր թվով՝ 1078 աշակերտ: Նշեմ, որ նախորդ տարի տասներկուերորդ դասարանն ավարտեց 69 աշակերտ, եւ միայն տասը աշակերտ ընդունվեց վրացական բուհեր, մյուս մեծամասնությունը սովորում է Հայաստանի ու Ռուսաստանի բուհերում: Իսկ այս տարի մենք ունենք 76 հայկական դպրոցի առաջին դասարանցիներ, որոնցից յուրաքանչյուրն ստացել է անհատական նոութբուք: Աշակերտներն արդեն ապահովվել են գրքերի գերակշիռ մասով, որքան գիտեմ, բացակայում են հիմնականում հայերեն ձեռնարկները, հուսով եմ՝ մոտակա օրերին Հայաստանի համապատասխան ատյանները կփոխանցեն դրանք: Ինչ վերաբերում է վերանորոգմանը, ապա նշեմ, որ շինարարական աշխատանքներ տարվել են շրջանի երեք հայկական դպրոցներում: Այս տարի մտադիր ենք առավել ընդլայնել ծրագրի շրջանակը, ընդգրկելով նորոգման կարիք ունեցող այլ դպրոցների եւս:

ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՆՇԵՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԻ ՏՈՆԸ

Ահա նորից մեկնարկեց Նոր ուսումնական տարին: Եվ ավանդաբար, այն տոնական ու նշանավոր է դառնում հատկապես միջնակարգ հաստատություններում, քանի որ հենց այստեղ է սկիզբ առնում մարդկային կյանքի ամենապատասխանատու ու հետաքրքիր տարեգրությունը:

Սեպտեմբերի 16-ին դպրոցական առաջին զանգը հնչեց նաեւ հանրապետության 126 եւ Թբիլիսիի 3 հայկական դպրոցներում: Ու թեեւ «Գիտելիքների օր»-ն իր բովանդակությամբ նույնը պիտի լիներ մայրաքաղաքի հավասարապես երեք դպրոցներում (այս մասին նյութի ամենավերջում), այդուհանդերձ, առավելապես հանդիսավորվեց թիվ 104-ում:

Նախքան ուսումնական առաջին օրվա սկիզբը, 290 դպրոցական գեղեցիկ շարքով հավաքվել էր բակում, ուր նրանց, նաեւ տնօրինությանն ու մանկավարժներին, շնորհավորելու էին եկել պատվարժան հյուրեր, մասնավորապես՝ Վրաստանի ռեինտեգրացիայի նախարար Պաատա Զաքարեիշվիլին, Վրաստանի պատժակատարողական, պրոբացիայի եւ իրավական օգնության նախարար Սոզար Սուբարին, Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ

Ելույթ է ունենում Պաատա Զաքարեիշվիլին

վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող Կարինե Մանուկյանը, «Կամուրջ» տարեգրքի գլխավոր խմբագիր, բանաստեղծուհի, թարգմանչուհի Անահիտ Բոստանջյանը, կրթական ոլորտի երկար տարիների աշխատակից Նորայր Բաղդասարյանը, ինչպես նաեւ Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու լուսարարապետ Տեր Մանուկ քահանա Զեյնալյանը, թեմի «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը, «Օբյեկտիվի» հեռուստաընկերության հայկական հաղորդումների վարիչ Գիորգի էլիբեկյանը եւ ուրիշներ:

Բացելով հանդիսավոր արարողությունն ու ողջունելով ներկաներին՝ դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանն իր խոսքում նշեց, որ 75-ամյա դպրոցը հպարտության արժանի պատմություն ունի թե՛ մանկավարժական կազմի եւ թե՛ աշակերտների ներկա ու հետագա նվաճումների առումներով: Խաղաղություն եւ ուսման մեծ եռանդ մաղթելով մանկավարժներին, դպրոցականներին ու հատկապես 24 առաջին դասարանցիներին՝ նա ընդգծեց կրթօջախի պատասխանատու առաքելությունը ծննդավայր Վրաստանի ու նաեւ պատմական հայրենիք Հայաստանի հանդեպ:

Իր ելույթում, Պաատա Զաքարեիշվիլին մեծ ուրախություն հայտնեց դպրոցը շեն ու կանգուն եւ առաջադեմ աշակերտությամբ լի տեսնելու համար: Նա խոստացավ, որ ուսումնական տարվա ընթացքում դպրոցի տնօրինության հետ կունենա գործնական հանդիպումներ եւս:

- Վրաստանը միասնական ու հարուստ է ազգային իր բազմերանգությամբ,- շեշտեց նախարարը,- որը պահպանելու համար փորձում է ստեղծել գոյատեւման նախադրյալներ ու կենսուղիներ, այս պարագայում հայկական դպրոց, ուր մայրենիով սովորելու եւ շփվելու, միաժամանակ, պետական լեզվին տիրապետելու լայն հնարավորություն ունեք: Հուսով եմ, հետագայում, որպես կատարյալ մասնագետներ, կինտեգրվեք Վրաստանի տարբեր ոլորտներ:

Հաջորդիվ օրհնության իր խոսքն ասաց Տեր Մանուկ քահանա Զեյնալյանը, այս անգամ ոչ միայն հյուրի, այլեւ ծնողի կարգավիճակով, քանի որ առաջին դասարանցիների շարքում նրա առաջնեկն է՝ դուստրը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԱԽԱԼՑԻԽԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍԱՆԵԼՈՒ Է 55 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ

Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Ախալցիխե քաղաքի թիվ 3 հայկական դպրոցում Նոր ուսումնական տարին բացվեց զուգահեռ 3 առաջին դասարանների առկայությամբ, ուր ընդհանուր թվով սկսեց ուսանել 55 աշակերտ: Ուսումնական առաջին օրվա, անցյալ, ներկա ու գալիք բարեփոխումների եւ խնդիրների մասին մեր թղթակից Գայանե Բոստանջյանը զրուցել է դպրոցի տնօրեն Սվետլանա Հարությունյանի հետ:

- 2013-2014 ուսումնական առաջին օրը դպրոցում հիրավի մարդաշատ էր: Հյուրընկալվել էին նահանգապետի տեղակալ Թամարա Գոգոլաձեն, շրջանի փոխքաղաքապետ Մալխազ Ասպանիձեն, պատվարժան այլ հյուրեր: Դպրոցականներին ու մանկավարժներին իր օրհնությունն էր բերել նաեւ տեղի հոգեւոր հովիվ Տեր Եղիշե ավագ քահանա Հարությունյանը,- հայտնեց տիկին Սվետլանան:- Ուստի, թույլ տվեք «Վրաստան» թերթի միջոցով շնորհակալություն հայտնել նրանց ու նաեւ շնորհավորել բոլորիս Նոր ուսումնական տարվա առիթով, մաղթել բերքառատություն ու ամրություն, քանզի որքան ամուր են գիտելիքների հիմքերը, այնքան մեծ է հավանականությունը հետագայում՝ որպես անհատ ու լավ մասնագետ, կայանալու մեջ: Ասվածը փաստեմ մեր իսկ դպրոցի օրինակով, անցած տարի 17 շրջանավարտներից 12-ը այժմ ուսանելու են Թբիլիսիի եւ Ախալցիխեի պետական բուհերում, մեկը նրանցից՝ ոսկե, մյուսը՝ արծաթե մեդալակիր է: Իսկ այս տարի կունենանք 38 շրջանավարտ: Ընդհանուր թվով դպրոցում ուսանում է 623 աշակերտ, դասարանները գործում են 2-3 զուգահեռներով: Մանկավարժական կազմը նույնպես համալրված է. մենք ունենք 62 բարձրակարգ մասնագետ:

- Ինչ վերաբերում է խնդիրներին,- շարունակեց Սվետլանա Հարությունյանը,- ապա դրանցից առաջնայինը հայերեն (նաեւ ռուսերեն, վրաց լեզվով դասագրքերը միշտ ժամանակին ենք ստանում) դասագրքերի պակասն է, թեեւ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հավաստիացրել է, որ հայտը Հայաստան է ներկայացված անցած ուստարվանից, եւ մոտ օրերս դասագրքերը կլինեն Ախալցիխեում: Դպրոցը նաեւ դպրոցական գույքի խիստ պակաս ունի, վերջին անգամ ստացել ենք 2 տարի առաջ: Շատ շնորհակալ կլինենք, եթե գտնվեր մեկը, ով կաջակցեր մեզ այդ հարցում, կօգներ՝ ձեռք բերելու մոտ 200 նստարան: Վերանորոգման աշխատանքների կարիք նույնպես զգացվում է, եւ մենք համապատասխան ատյանների օգնությամբ աշխատում ենք այդ ուղղությամբ: Դպրոցը նաեւ ոչ այդքան հարուստ է համակարգիչներով, այնինչ դրանց պահանջը շատ է զգացվում մեր օրերում: Իսկ առաջին դասարանցիների նոութբուքներն ստացել ենք, եւ քանի որ վեց առաջին դասարանցիներ առավել ուշ գրանցվեցին, նախարարությանը մի փոքր ուշացումով ենք ներկայացրել հավելման փաստաթուղթը: Համոզված եմ, որ օրերս կստանանք այդ հավելումը եւս:

Պատասխանատվությունը մեծ է, որովհետեւ մեծաքանակ դպրոց է (Գ.Բ. Ախալցիխեի մերձավանում գործում է նաեւ թիվ 4 վրացահայկական դպրոցը, որի հայկական բաժնում ուսանում է մոտ 35 աշակերտ),- հավելեց տիկին Սվետլանան,- ուստի, օգտագործելու ենք մեր մտավոր ու ֆիզիկական ողջ կարողություններն ու լծակները դպրոցը կանգուն եւ ուժեղ պահելու համար:

ԽԱՆԴԱՎԱՌ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 16-ին մարդաշատ էր Ասպինձայի շրջանի Դամալայի հայկական դպրոցի բակը:

Ուսումնական տարվա սկիզբը ազդարարող օրը մանկավարժներն ու աշակերտները դիմավորեցին խանդավառ տրամադրությամբ եւ պետության օրհներգի ներքո: Դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանն աշակերտներին շնորհավորեց նոր ուսումնական տարին սկսելու առթիվ եւ նշեց, որ կրթված սերունդը երկրի առաջընթացի առաջին երաշխիքն է, իսկ հաջողությունները՝ կրթության ոլորտում մեր երկրի կայացման կայուն հիմնաքարը: Նա շնորհավորեց նախորդ ուստարվա շրջանավարտներին եւ նշեց, որ այս տարի առաջին դասարանցիների թիվը հասավ 15-ի (անցյալ տարի՝ 13): Դպրոցն ունեցավ մեկ մեդալակիր (ոսկե), որը նվաճեց շրջանավարտ Ժիլբերտ Սաղաթելյանը: Իսկ դպրոցի 12 շրջանավարտից 7-ը դարձան Թբիլիսիի եւ Երեւանի բուհերի ուսանողներ:

Դամալացիներին նոր ուսումնական տարվա սկզբի առթիվ շնորհավորեցին Ասպինձայի մունիցիպալիտետի վարչության պետ Լեւան Ցաբաձեն, շրջանի կրթական ռեսուրս-կենտրոնի վարիչ Տրիստան Մուրադաշվիլին, Դամալայի գյուղապետ Մարտին Կերոնեկյանը, Ասպինձայի շրջանի սակրեբուլոյի պատգամավոր Էմին Բալոյանը եւ ուրիշներ՝ մաղթելով արգասաբեր ուսումնական տարի:

ՆԻՆԱ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ
Դամալայի հանրային դպրոցի ուսուցչուհի